



#### 54. ԽՈՋԱ ԹՈՒՄԱՍ

Ժամտնակով մեկ մարդ գըլնի, անունը *Խոջա Թումաս*: Իրեք հոգի գող հ'իրար բռնին, կէրթան ընտոր վրեն, կը մտնին մեկ ձորու մեջ: *Խոջա Թումաս* շոպան կըտեսնի էտ իրեք գողին, իրիկուն օր օշխար կը բերա, ուր աղին կասա, թե.— Յիլան ձորու մեջ իրեք գող տեսա:

Չոպան կը քնի, *Խոջա Թումաս* թվանք կաննի ուր ձեռ, ուր օշխարին մուղաթ կը կենա: Գիշեր շուր ի լուս գողեր կիգան, չի կարնան օշխար տանին, կը մնա, դողեր հ'իրար հետ կը զրուցին, կասեն.— էտի մեկ մարդ, մենք իրեք մարդ, հ'որի գողութենով էրթանք թալնինք, էրթանք զոռով առնինք:

Հ'ելան էկան նստան *Խոջա Թումաս* շաղըրի մեջ:

*Խոջա Թումաս* էկավ ասեց.— Դու ի՞նչ մարդ եք:

Րսեցին.— Մենք գող ենք:

Րսեց.— Մարդու տաս օշխար կիտամ, տարեք ձեր ճժեր պահեք, գողութեն մէ՛նեք:

Հ'իրարու էրես իշկեցին, ըսեցին. «Մեկ խոսք ասինք, դող ենք, մարդու տաս օշխար տվեց, հազր ուրին կսպանենք, օշխար ըրարդի կտանենք»:

— Չէ,— ըսեցին,— մենք պըտի հ'ելնենք քու օշխար բիրարդի տանենք:

— Տե՛,— ըսեց,— նստեք, ես ձեզի մե պան ասիմ: Աստված մեղք ձեզնե կուղա: Հ'առաջ մենք իրեք հոգով հազար գլխ օշխար ժողվեցինք, օր էրթնք ուրիշ տերութեներ ծախինք, ընկանք ճամփախ գացինք: Մասյաց սարի պես մեկ սարի պատահանք, մութ

տվեց վրա, ոչ գեղ տեսանք, ոչ շոպան, ոչ մեկ մարդ, անվերի սար էր: Մեկ էլ տեսանք սարի գլխու սուրուից մեկ մեծ սուրու հիշավ, էկավ: էկավ, էկավ, մենք էլ գացինք մոտեցանք, էկավ օր մեկ հատ Քափագյոզը՝ օշխար քշեց բերեց խառնեց իրար, ըսեց. «Դու բարով ես էկի, Խոջա Թումաս», քշեց էտ էրկու հազար օշխարը, տարավ լցեց դազի մեջ, բերեց մեծ քար զարկեց զաղի գուռը, ահագին ցախ բերեց էր էնտեղ դարսեր էր, կրակ վառեց. կրակ օր շատ դլմիշ էղավ, շիշ զարկեց իմ մեկ ընկերոջ սրտի մեջ, վերցուց դրեց կրակին, էնի էփեց, կերավ, չկշտացավ, մեկել ընկերոջս զարկեց դրեց:

Օր կուշտ կերավ, ընձի ըսեց. «Խոջա Թումաս, դու էլ մացի սապախտան»: Իմ իլաճ կտրվավ, տեսա օր իմ էրկու ընկեր էփեց կերավ, ընձի էլ պիտի ուտեր: Էն օր կուշտ կերավ, ընկավ մեջքի վրեն քնավ: Ես բերեցի շիշ գրեցի կրակ, շիշն օր կարմրավ, վերցուցի, մեկ աչք ունեցր ճակտի մեջ, տարա բերեցի աչքի մեջ տեղ զարկեցի: Բոռաց, շիշ քաշեց թալեց ու հելավ ընկավ իմ հետև: էրկու հազար օշխար էր, էն ղղար լարեց զաղի վերև ու ներքև, ընձի չկրցավ բռնել:

էկավ նստավ ուր տեղ, ըսեց. «Զանգուկած ների՛»:

Ըսեց.— Համմե, աղա:

Ըսեց.— Լուսո՛ւն օշխար կը տանիս կը պահիս, ես դազի մեջ զործ ունիմ, կատարիմ դամ:

Ըսեց.— Շատ լավ, իմ աչքի վրեն:

Ես տեսա օր ներին էլ խոսավ էտ մարդու հետ, իմ իլաճ կտրվավ, ներին քշեցի տարա զաղի վերև, ներին մորթեցի, տի՛չ հանեցի: Լուսն օր բացվավ, ներու փոստը հագա, էկա կայնա դոան հետև: Զանգուկները օր զընկըրցուցի, Քափագյոզն հիմցավ, ասեց. «Զանգուկած ների, լուս ա»:

Ըսեցի.— Լուս ա, աղա:

էկավ քար քաշեց, թալեց դեն, ներու ոտ ու փոր իշկեց, օր ես հետ չփաթըթվինք, հելնիք դուս, ներուն թողեց դուս, էրկու հազար օշխար մեկ իշկեց ու դուս էրեց:

Օր ընձի չգտավ, ըսեց. «Խոջա Թումաս, հիրիկուն կը փախնեք օշխարի մեջ, մկա դոր պիտի պըրծընիս»:

Ըսեցի.— Քու զանգուկած ներին մորթեք իմ, փոստ հագիր իմ, հելիր իմ:

Քափագյոզն հելավ ընկավ իմ հետև, լարեց, դորվի փախա, չպրծա ձեռնեն: Գացի մեկ բանձր քարափի գլխով փախա, հընցա,

Թափազյոզն էկավ, քարափից ընկավ էղավ հազար կտոր: Օշխարն էլ շտարա ծախելու, իմն էլ Թափազյոզինն էլ դարձուծի բերի, էս սուրուն էն օշխաբներն են, օր դարձուծի բերի, թե ընծի չըք ավտընա՝ հովիվներուց հարցուցեք:

Ըսեց.— Արեք դողութենը թարկ էրեք, մարդուդ տաս օշխար էլ կիտամ, էղնի մարդուդ քսան օշխար, տարեք ձեր ճժեր պահեք:

Հիրարու նրևս իշկեցին, ըսեցին.— Մեղնե կը վախենա, առակ ասելով մեկ խոսքին տաս օշխար դեմելցու:

Ըսեցին.— Չէ՛, մենք դողութենի թարկ չինք իտա, քըղի կըսպանինք, օշխար բիրադի կը տանինք:

Ըսեց.— Աստված մեղք ձեզնե հ'ուղա, նստեք մեկ առարկա էլ ասիմ:

Ըսեց.— Մենք ձեզի պես իրեք հոգով հ'ելանք գացինք դողութեն էնելու. գացինք ընկանք Բառեստանա՝ շուր, մեկ էլ տեսանք մեկ ձիավոր էնտից էկավ: Գալու պաշտան ձիուց իջավ, դարկեց մեր իրեքին էլ հաղթեց, մեր իրեքին էլ կապեց, թաղին հետն էր, թաղուն ըսեց ումալըդ էր, թաղին դետին քանդեց բերեց մեր իրեքին էլ գոտեկալից հորեց, հող տվեց կըշտներն ու զենք թողեց էն տեղ, թաղին թողեց դարաուլ, ինք զնաց: Թաղին օր շոք տվեց, քանդեց մտավ հողի տակ, քանդելով, քանդելով էկավ իմ մեկ ընկերոջ փոր ծակեց, սիրտ ու թոք կերավ, իմ ընկեր մեռավ, հ'ելավ մեկել ընկերոջն էլ փոր ծակեց, սիրտ ու թոք հանեց կերավ, է՛ն էլ մեռավ: Ես միտք էրեցի, թե կշտացավ կայնավ դրադ, մեկ սհաթից անոթցավ, իմ փորն էլ պըտի ծակա, իմ սիրտն ու թոք ուտա: Ես մեռնիմ: Ջանիս օր քար էղավ, շարչըրվելով էտ հող քանդեցի, ես հ'ելա, ալոեկներով իմ ձեռ ու ոտ հ'արձրկեցի, խանչալ քաշեցի, թաղուն ըսպանեցի. մեկ էլ տեսա էն ձիավոր ընտից էկավ. դոր իշկեցի, նեա քար կար, նեա ձոր կար, օր փախնինք, աղատինք: Ես վախա, մեկ տեղ ծառ կար, փախա հ'ելա ծառի գլոխ, էկավ ձիուց իջավ, սապոկներ օտներ, թուր քաշեց առավ բերան, բռնեց ծառն ու հ'ելավ: Ես տեսա, օր ընծի պըտի ըսպաներ, էլ իլաճ չկար, դայիմ փաթըթվա ծառին ու ծառը ժըժխեցի: էտոր սապոկներ պըծավ ու էտի էկավ ուր քյալի վրեն, ընկավ մեռավ: Հ'իջա, էտոր շորեր հագա, ասպապ կապեցի, հեծա ձին օր քշինք էրթինք ուրիշ էրկիր: Զիուն չհաղթեցի, ձին քաշեց տարավ ուր գեղի մեջ: Տեսա օր իլաճ չէզնի, ձիուն ես չեմ հաղթի, փափախ քաշեցի հ'իջուցի

1 Միջագետք (Մ. Բ.):

իմ աչքերը, ձիու գլուխ թողեցի, գնաց կայնավ ուր տիրու դուռ էտոր մշկներ հ'ելան ձին բռնեցին, ես ձիուց հ'իջա գացի տուն, ձեռով էրեցի, թե տեղ թալեք: Տեղ թալեցին ես պառկա ու յորդան քաշեցի իմ գլխուն: էտ դեղի ամենագլխավորն էլ էտ մարթն էր. հավար ընկավ գեղի մեջ, թե մեր գեղի գլխավորին ի՞նչ էղեր ա, օր լեղուն բռնվեր ա շղուցա: Ինչ ղոզր օր էտ գեղը իշխաններ կեն, էկան, շթողի ընծի մոտ գին, նեա թողի իմ էրես բանին: Հարի կես գիշեր հ'ըմեն հ'ելան գացին:

Ըսեց.— Մարդ, քրզի ի՞նչ է էղե, օր դու չը գրուցիս:

Ըսեցի.— Ես քու մարդ չիմ, ես քու մարդու սպանողն եմ:

Ըսեց.— Դու ի՞մալ իմ մարդ չես, իմ մարդու սպանողն ես:

Ըսեցի.— Քու մարդ մեր իրեքին կապեց, գետնի մեջ հորեց: Թաղին իմ ընկերտանուն ըսպանեց, ես էլ թաղուն ըսպանեցի, քու մարդ ընծի լարեց, հանեց ծառի գլուխ, ընծի պըտի ըսպաներ, իմ իլլաճ կտրվավ, փաթթրվա ծառին, գլուխ ժըթխեցի, քու մարդու սպանկներ պըծավ ծառեն, ընկավ գլխու վրեն՝ մեռավ: Ես շորեր հագա, ասպապ կապի, ձին հեծա օր փախցուցինք, տանինք ուրիշ էրկըներ. ձին գլուխ խլեց, չհաղթեցի, քաշեց բերեց: Մկա կսպանիս՝ դու դինաս, կազատիս՝ դու դինաս:

Կնիկն ըսեց.— Հ'ելի ձին պատրաստա, հ'իրար հետ էրթանք, օր ըսկի մարդ չիմնա, թե դու իմ մարդ չես, իմ մարդու ըսպանողն ես:

Հ'ելա ձին հեծա, կնիկն էլ առա թարքս, փախա էկա. թե չըք ավտընա, էն շադրի միջին մեկ էն կնիկն ա, գացեք հարցուցեք:

Գացին հարցուցին, ըսեց.— Դորթ ա:

Ըսեց.— էն մարդը ընծենն ի՞նչ խեր տարավ, օր դուք ի՞նչ տանիք: Ըսեց.— էկեք գողութենի թարկ տվեք, մարդուդ տասը օշխար էլ կիտամ, մարդուդ էղնի հ'եռսուն օշխար, տարեք ձեր ճժերը պախեք:

Հ'իրարու էրես իշկեցին, ըսեցին.— Մեզնե կը վախենա, երկուդ տալով մենք ըտըրնից ձեռք չինք քաջե:

— Չէ՛,— ըսին,— սլըտի քեզի ըսպանենք, օշխարը հ'ըմեն տանինք:

— Տե՛հ,— կըսե,— օր չեք լսե, աստված մեղք ձեզնե հ'ուզա,— ըսեց,— նստեք մեկ բան էլ կա՝ ասիմ: Մենք իրեք մարդով հ'ելանք սկսեցինք բաղրկանութենն էնել: Շատ ապրանք առանք, գացինք լցեցինք դյամու մեջ ու ընկանք ծովու էրեսը, թե մեկ օր, թե չորս

օր, գացինք ծովու էրեսը, գյամին քիսավ գային<sup>1</sup>, տեղոց տեղ ցիսավ, արրանքն էլ, մարդիկն էլ ըրրագի գացին ծովի մեջ, բաթմիշ էղան-  
ես ընկա մե կտոր տախտակի վրա ու մացի ծովու էրես: Իրեք օր,  
չորս օր էտ տախտակը ընձի դըվըոցուց ծովու էրեսը, մութ գիջերին  
տախտակը գնաց քիսավ մեկ բանի. ձեռ տվեցի, օր մեկ ծառ էր,  
բունցի էտ ծառն ու մացի տախտակի վրեն շուրի լուսացավ. լուան օր  
բացվավ, տեսա, օր ընձի բերեր էր հաներ էր ծովու դրաղը: Տախ-  
տակի վրայեն հ'իջա, գացի մեշի մեջ, մեկ շորս տը հինգ օր էլ  
կանաչ ուտելով, քոլ ու քոս ուտելով մեշի մեջ գացի մե ունջսլըրի  
նաստ էկա. հաց հ'ուգեցի, ընձի հաց շտվեց, ըսեց. «Ստտի Առալի  
տուն հարցու գնա, մեր հաց ֆլան տեղն ա գրուկ. մեր եղ, մեր ձուն,  
թավա, ամենայն բան ընտեղ գրուկ ա, գնա քու ձեռով էրա կեր,  
չուր իրիկուն ես գամ»: Գացի հարցուցի Ստտի Առալի տուն գտա,  
տեսա մեկ մարդ շոքեր կտրուկ էր, մեկ տաշտ հաց հ'առեջ գրուկ  
էր, մեկ օղլուշաղի սրտից մեկ իսանի քյալա կախուկ էր. հավե-  
րու մեկ մեկ ոտք կտրուկ էր, ամբըրի մեջ թալուկ էր, է՛լ էտոր  
հաց չկերա, շուրի իրիկուն հ'ինք էկավ, ուր էզներ կապեց, էկավ  
ըսեց. «Առնա՛խ, հաց կերե՛ր ես»:

Ըսեցի.— Քու հաց կուտվի՞, օր ես ուտիմ:

Ըսեց.— Յավաշ ասեմ, տես, թե կուտվի իմ հաց՝ կեր, թե չի  
ուտվի, մի՛ ուտի: Ըսեց.— Սա Ստտի Առալն եմ, արի էրթանք իմ  
ամբրներ տես: Գացինք տեսանք, օր շատ ամբրներ ուներ, յոթ  
թաղավորութենի կարողութեն ուներ:

Ըսեց. «էտ մարդը օր շոքերը կտրեր եմ, իմ հերն ա, ինք լո-  
թի մարդ էր, իրան ամբրներ թողած՝ կէրթեր խլղից հաց գուգեր,  
կուտեր, օտներ կտրեր եմ, տաշտն էլ հաց լըցեր եմ ուր հ'առեջ,  
քանի սաղ ա՝ թը՛ղ ուտա: էտ օղլուշաղն էլ իմ կնիկն ա, տեսնիս  
ես ի՛մալ տղամարդ եմ, ընձի թողեր էր, մեկ անպետք քաշալ տղի  
վրա սիրվեր էր, գլոխ կտրեր եմ, կախեր եմ ընտոր սրտեն, թը՛ղ  
էրթա փափագն առնի: Հավերն էլ իմ հավերն են, կէրթեն խլղին  
վնաս կիտեն, ընձի կը քըրվեն, օտներ կտրեր եմ, թալել եմ ամ-  
բըրի մեջ, թրղ ուտին ու հավկիթ ածին: Իմ հաց շուտվի՞, թե՞  
կուտվի»: Ըսեցի. «Կուտվի»: Ըսեց. «Դու ի՛նչ մարդ ես»: Ըսի. «Սա  
անտեր, բուղալա մարդ իմ»: Ըսեց. «Կտեսնի՞ս իմ կարողութեն.  
դաս էղնիս ընձի ախպեր»: Ըսեցի. «Կէղնիմ քեղի ախպեր»: Սա  
էղա պզտիկ ախպեր, էն էղավ մենձ ախպեր: Բերեց ընձի կարդեց.  
ես կէրթենք ունջպըրութեն կէնենք, էն կը մըներ տուն. էրկու տարի

1 Այստեղ՝ վտանգավոր, վնաս պատճառող (Մ. Բ.):

մացի, էղավ օր իմ կրնիկ հիվնդցավ, մեկ շորս հինգ օր հիվանդ մնաց: Էն մեկ օր իմ ախպեր ընձի հաց չը բերուց, հտըցուց, մեկ էլ տեսա իրիկվան էկավ:

Ըսեց. «Ախպեր, քու կնիկ մեռեր ա, քելի էրթանք»: Գացինք տեսանք օր մեռնր էր: «Գինաս ի՛նչ կա,—ըսեց,—մեր ադաթ, մարդ մեռնի՝ կընիկը հետը կը հորինք, կընիկը մեռնի՝ մարդ հետը կը հորինք: Մկա քու կնիկ մեռեր ա, բեղի պըտի հետը հորինք»:

Լավա ընկա՝ ջանըմ, գյողմ, հս սաղ մարդ, ընձի ընչի՞ պըտի տանիք հորիք:

Ըսին. «Չէ՛, անկարելի ա, մեր ադաթ էմալ ա, քեզի պըտի հորինք»: Բերեցին էրկու թափուտ շինեցին, մեկ ընձի դրին մեջ, մեկ իմ կնիկ ու շալկեցին մեր թափուտները տարին թալեցին մեկ հորու մեջ: Ետո, հս հ՛ելա տեսա օր էտ հորի մեջ ուրիշ մեռելի թափուտ շկեր, մնաց, իրկվան տեսա էրկու թափուտ էլ բերին թալին, հ՛ելա ընտոնց թափուտներ բացի, տեսա օր ընդորն էլ մարգը մեռնր էր, կնիկն հն հետը բերած թաղած: Տեսա գիշերվա կիսին իմ կնկա թափուտ շանալսր քաջոց տարալ, հ՛ելանք լուսուն, էն կրնկան ըսեցի. «Մուղաթ կեցի, էն ջանավար կիգա, քու մարդու ջանգաք էլ կը տանա, օր էկավ տանելու, հս կը կախվիմ ընդորն, դու էլ կախվի ընձընե, հալբաթ էտիկ կը քաշա կտանա մեկ տեղ դուս կհանա»: Գիշեր մեկ վախտ տեսա օր լխոտոց ընկավ թափուտ, հս կախվա էտ թափուտից, կնիկն էլ կախվավ ընձնե, քաշեց տարավ մեկ ձորու բերան հանեց դուս: Մենք օր հ՛ելանք, ջանավար փախավ, վերցուցի էտ կնիկ, առա էկա: Մկա էտ շադրի մեջ մեկն էլ էտ կընիկն ա, գացե՛ք հարցուցեք, թե սո՞ւտ ա, թե՞ դորթ:

Գացին հարցուցին, ըսեց. «Ղորթ ա», դարձան էկան:

Ըսեց.— Արե՛ք, մարդուդ տաս օշխար էլ կիտամ, էղնի ամենուդ քառսուն օշխար, գողութեն մէնեք, տարեք ձեր ճժեր պախեք:

Իրարու էրես իշկեցին, ըսեցին.— Մեզնե կը վախենա, մեկ առակ ասելուն տաս օշխար կը հ՛եմելցու:

— Չէ՛,— ըսեցին,— մենք քեզի ըսպանինք, քու օշխար բիրադի պըտի տանինք:

— Էտ մարդիկն օր,— հս ըսեցի,— ըտունք ընձնե ի՛նչ խեր տարան, օր դուք ի՛նչ խեր տանիք:

Ըսեց.— Կոիվ կէնիք, հ՛ելեք կոիվ էնինք:

Հ՛ելան, խոջա Թումաս հեծավ ուր ձին, վերցուց ուր ասպապ, էն իրեք մարդ կանան մեկ դհեն, էտիկ կանավ մեկ դհեն: Սկսեցին կովել, շատ ու քիչ կովան, աստված խապար էղնի, խոջա Թումաս իրեքի գլոխն էլ կտրեց: Էնի հասավ ուրին մուրազին, դու էլ հասնիս քու մուրազին: